

այս ճշմարտութեան, ու անոր համար իրենց ժողովրդի միտքն ալ ապագայ գերագոյն երջանկութիւններու հեշտանքով օրօրած են տիրացու ժողովուրդ մը դարձնելով զայն, որ կրօնականներու ազդեցութեան տակ կազմուած իր գաղափարները կերպէ, աշխարհային, գործնական կեանքին մէջ ձախաւել վիճակ մը միայն ներկայացնելով:

Գրութիւնը միանգամայն յուսահատական կը լինէր, եթէ տիրացու ժողովուրդը մնար այն թշուառ հասկացողութեան մէջ, թէ տիրացու լինելը ամենալաւ բանն է աշխարհում: Բայց հայ ժողովուրդը այդքան անյուսալի դիակ չէ. ամեն տեղից, բոլոր կողմերից բարձրանում են ձայներ, որոնք ասում են թէ չեն ուզում տիրացու մնալ. այդ ձայները համախմբուած են օր օրի վրա, թանձրանում են, մեծ աղմուկ են կազմում:

Տիրացու ժողովուրդը մըն ենք և կուզենք որ գործնական ժողովուրդ մը ըլլանք: Մարդկային ճիշդ մըն է աս թէ՛ն, բայց աշխարհի մէջ ամեն ինչ, նոյն իսկ կրօնքն ու կրօնականները, մարդկային են, ուրեմն մեր կրօնականներն ալ պէտք է որ այդ հակազդեցութեան գործին սատարողներ ըլլան, ասով իրենց գոյութիւնը արդարացուցած ըլլալու համար:

Բայց ինչպէս պիտի հոգեորականները կարողանան արդարացի իրանց գոյութիւնը, ներպատեւելով, որ տիրացու ժողովուրդը գործնական ժողովուրդը դառնայ: Որքան քարէքար ընկնէ, որքան սար ու ձոր չափէք, միշտ մի և նոյնը կը գայ ձեր առաջ—գիտութիւն: Հաղար ու հարիւր հաղար անգամ ծածմամբ, օրօրեցի երեխային անգամ յայտնի դարձած այս իրողութիւնը կայ, մնում է, բարձրանալու բարձրանալու է ամեն տեղ: Կ. Պօլսոն, Նոր-Ջուզայում, Սիւսում, Օրդուբաթում: Տիրացու ժողովուրդը պէտք է բաց անէ իր աչքը. շատ տեղ այդ բանը արդէն կատարում է աշխարհական կրթութիւնը, մասուրը, գրականութիւնը: Բայց անհամեմատ բազմաթիւ են այն տեղերը, ուր հոգեորականն է խաւար ամբողջի, անագին մասսաների միակ յոյսը:

Իր բարոյականով ալ մեր հասարակութիւնը տիրացու ժողովուրդ մըն է, և ասիկայ կը պարտինք նորէն մեր կրօնականներուն, քանի որ մեր հասարակութիւնը գերազանցապէս կրօնական ըլլալով, կրօնի պաշտօնականներու անմիջական ազդեցութեան տակ է: Մեզի պէս հասարակութիւններու մէջ, բարոյական քայքայուած պայմաններու վերանորոգողները պէտք է ըլլան կրօնականները: Աշխարհային ինչ կենսական և օգտակար բարոյական յորդորներ կրնային կարգաւ մեր կրօնականները իրենց ժողովուրդին և ասոր փոխարէն բնականացական ինչ բարոյութիւններու մէջ կը մտնէին իրենց ուսկընդիւնները, և երկնքի բարձրագոյն պատուիրանները կանուանեն բարոյականի սկզբունքները: Ընդհակառակը կրօնականները եկեղեցիին բեմէն պէտք է քարոզեն թէ բարոյականը ամէն բանէ առաջ մարդկային կերտումը մըն է. և այդ կերտումը սկզբունքներուն գործադրութիւնն է որ ամեն ոք իր նիւթական շահերը կը պաշտպանէ: Որչափ որ կրօնականները աշխարհին և աշխարհականներուն մօտենան, այնքան աշխարհը և աշխարհականները կը մօտենան իրենց: Այս փորձած ճշմարտութիւնը պէտք է մտքերնին պահեն մեր կղերականները:

Բայց հայ եկեղեցականները կարող են այդ պահանջի դիմաց հպարտութեամբ մասնաջոյց անել համալսարանական դիպլոմի տէր եկեղե-

ցականներին: Սակայն դրութեան ամբողջ տրադիցիոն ճիշդ նրա մէջ է, որ այդ դիպլոմները ոչ որին չեն շնչանում: Եւ «Մասիս»ը շարունակում է.

Գիտական եկեղեցականներ չէ ուզանք, որոնք ակադեմիական բացառութիւններ կարող ըլլան տալ Աստուծաշունչի պարբերութիւններուն. այլ կուտ կերպով, ժողովուրդի պահանջներուն ազդեցութեան տակ կազմուած կարող անհատներ, որոնք իրենց պաշտօնի բովանդակ լայնութիւնը ըմբռնելով դուրս ելին իրենց սահմանափակ մտքի վիճակէն և զանա աշխարհային իրերն ու իրողութիւնները ըմբռնելու համար հարկ եղած մտաւոր զարգացումը ստանալու:

«Մասիս»ը այս յօդուածը—մի ամբողջ երեւոյթ է Կ. Պօլսի մասուրի մէջ: Մենք ողջունում ենք այդ ուղղութիւնը, որ նոր է մտնում, նոր է ժողովրդականանում արեւելապաշտ և աւելապաշտութիւններէ մէջ: Այսօր խօսում է թիւրքաւայրի կրթված, առաջադէմ մասը. վաղը քարքան անգամ կը սկսեն ազդակել: Իսկ հայ կղերը իր հնադարեան անշարժութեան, իր մտաւոր խաւարի մէջ երբ կը հակառակայ այդ բանը: Սա հայց է: Բայց հայ ժողովուրդը պէտք է գլխովին, միաբան հասկանայ թէ տիրացու ժողովուրդ մնալը մի վերին աստիճանի անպատուաբեր գրութիւն է, մի սոսկալի դժբախտութիւն է, որի հետ համեմատած ոչինչ են նոյն իսկ վայրենի ցեղերի այն հարստահարութիւնները, որոնք ենթարկված է եղել նա երկար դարերի ընթացքում: Տիրացու ժողովուրդը ենք և ինչ... Միայն տիրացու ժողովուրդի մէջ կարող են տեղի ունենալ այն հաւատարմական շահատակութիւնները, որոնց բնին է ներկայումս դժբախտ, սովորաբար վաշտ: Աշխարհի առաջ այս բօլէին ասիական թիւրքերն մի գլուխը մըրդութեան հանդիսարան է ներկայացնում. Քրիստոսի փոխանորդ համարվողները թիւքերը յետ են ձախել և միմեանցից որսեր են խլում, սովալուրկ մարմիններ են աւելում ամառական 40 կողէկ թիւշակով: Հ. Ճնոցեանները պարճեմուն են իրանց առատ հունձերով, փառաբանում են պապերի եկեղեցին, որ սակայն պապանձված էր, երբ կոտորում էին այժմեան որսերին: Բաւական մեծ անպատուութիւն է դա մարդկային անուան համար: Եւ ինչու ենք այդքան անպատուութիւն հայ թիւքով մարդկութեան: Որովհետեւ տիրացու ժողովուրդ ենք...

Նրէկ մենք, խօսելով Սալտիկովի մահվան տասնամակի մասին, արձանագրեցինք այն անտարբերութիւնը, որ ցոյց տուեց առաջ մասուրը այդ առիթով: Այսօր «С. Петерб. Вѣдом.» լրագրում կարգում ենք մի յօդուած, որի վերնագիրն է «Մտացված գրողը: Այս ինչ է ասում այդ յօդուածը:

Ապրիլի 28-ին քրքայ. 10 տարի մի մուռացված գրողի մահվան օրից: Գերեզմանատանը, ուր թաղված է նա, առաւօտեան ժամի 11-ից հաւաքվեց ուսանողներն և ուսանողներին մի փոքրիկ խմբակ, բայց նորանք այժմ շատ չեն և Պետերբուրգում: Ասում էին թէ ժամը 2-ին գերեզմանատան եկեղեցում կը լինի հոգեհանգիստ հանդուցեալի այն ազգականների կողմից, որոնց պատկանում է նրա հեղինակութիւնների հրատարակութեան իրաւունքը: Յայտարարել հոգեհանգիստի մասին ի գիտութիւն ընդհանուրի այդ անելու և իմ տենչանքը կը լինի, ըստ կարելոյն, չուտով մեր նորագործ կաթոլիկներին կրօնական մի բաւարար կազմակերպութիւն տալ: Դժբաղդաբար, ես համարեալ եմ զրկված եմ անհրաժեշտ միջոցներից, իսկ շատ բան կայ անելու: Պէտք է ամեն տեղ դպրոցներ բանալ, մասուրներ կառուցանել կամ եկեղեցիները նորոգել և բոլոր անհրաժեշտ անօթները ու կարասիքները: Ինչ հարկաւոր կը լինեն նոյնպէս մի քանի օգնական միսիօնէր քահանայներ: «Բայց ամենից անհրաժեշտն է, մեր նուաճումները պահպանելու համար, օգնութիւն հասցնել հազար մեծամասնութիւնը այդ գրութեան մէջ է գտնվում:

«Մթերքները սպառելու հետ միասին» մենք տեսնում ենք, որ ամեն օր անում է կարօտեալների թիւը: Նս ինձ հարցնում եմ, թէ ինչպէս կարող են այդ մարդկանցից շատերը, արդէն ուսուցանող, դարձան հասուն, երբ նրանք գոնէ կը կարողանային պահպանել իրանց գոյութիւնը մի քանի վայրերի բոյսերով: Սակայն սովն արդէն իր գոնէն է տանում ամենաաղքատների մէջ: Միմիայն առաջիկայ հունձը, այսինքն օգոստոս ամսին, կարող է մի փոքր ամբողջ այդ թշուառներին. մինչև այդ ժամանակ պէտք է օգնութիւն հասցնել նրանց: Բայց մինչև անգամ հունձը անբարար կը լինի թշուառութեան

«Այդ բոլոր նուաճումներից յետոյ» պէտք է կազմակերպել,—դա է միջոցը ձեր բերածը պահպանելու համար: Ես աշխատում եմ այդ բանն

ազգականները աւելորդ էին համարել, հատկապէս, որ հասարակութիւնը ինքը կը լինէ: Պետերբուրգում էլ փոքրաթիւ մարդկանց ներկայութեամբ կատարվեց մուռացված գրողի հոգեհանգիստը: Եւ ո՞վ է այդ գրողը—Սալտիկով: Եկեղեցին և մուռացված գրողը անուն 10 տարվայ ընթացքում—հենց այդ էր պակասում ժամանակակից հասարակութեան...

Մ Ա Ր Ա Մ Ճ Ր Ա Գ Ն Ե Ր
(Նամակ Ղալաբից)

Ժամանակն ամեն ինչ փոխում է. ամեն բան առաջ է դնում, կատարելութեան է ձգտում: Տարածվում է լոյսն ամեն տեղ—ամեն կողմ, և կենքը ալ ևս կանգ չէ աւելում առօրեայ խոչընդոտների առաջ: Երջում էք երկրի չորս կողմը, միշտ նոյն բանը, նոյն համոզմունքը տիրում է ձեզ՝ որ ժամանակը առաջադիմութեան կարապետն է, նա յաղթող է, անհկուն և անողորմ:

Սակայն որպիսի հիասթափում, որպիսի դարձանք է տիրում ձեզ, երբ ձեր առաջ պատկերանում են դեռ ևս այնպիսի տեղեր, ուր ժամանակն անգամ անգործ է գտնվում իր ազդեցութիւնը թողնել, փոփոխութիւն, կենդանութիւն չունենալ... Այդպիսի տխուր, մեռելային վիճակի մէջ կարելի է տեսնել դեռ ևս մեր մի քանի գաւառները, ուր հասարակական կեանքը այնքան մեռած, յետադէմ պայմանների մէջ է, որ ակամայից ուզում էք հաշտվել այն մտքի հետ, թէ ժամանակը ոչ միայն կապ չունի առաջադիմութեան հետ, այլ և կաշկանդող, խաւարեցնող և յետադիմող է:

Այդպիսի սպաւորութիւն թողեց մեզ վրա և Ղալաբը:

Դեռ մօտ անցելու մի, որանից 2—3 տարի առաջ, այստեղ հասարակական կեանքը, պէտք է խոստովանել, աւելի բան չաւ պայմանների մէջ էր: Իրաւ, ի՞նչ այն ժամանակ էլ չը կային հրաշքներ, սակայն կարելի էր նկատել այնպիսի միջթարակ կէտեր, որոնք յատուկ են մի համայն, փոքրիկ գաւառական քաղաքի: Այդ բոլորը վերաբերում էր, բացառապէս, այն մի խումբ երիտասարդների ջանքերին, որոնց մէջ կարելի էր տեսնել ողի, եռանդ և որ ամենազիւստորն էր համարալիս գործունէութիւն: Դրանց չնորհիւ էր, որ գաւառական ճնշող, մեծամեծային կեանքի մէջ յաճախ երևում էին այնպիսի ուրախութիւն գծեր, որ ժողովուրդը ինքը, որքան էլ նա գտնվելու լինէր անտեսական աննպաստ պայմանների մէջ, միշտ սիրով, համակրութեամբ էր վերաբերվում իւրաքանչիւր ձեռնարկութեան: Ուստի գործը այդպիսի պայմանների մէջ երբեք չէր դադարում:

Իսկ այժմ: Այժմ ամեն ինչ ստանդ, ամեն ինչ դնվում է դարձաւ նոյն դարաւոր նիւթված, մութ, յետադէմ վիճակի մէջ: Այդ բոլորը ոչ միայն այն բանի շնորհիւ է, որ նոյնպէս երիտասարդութեան մէջ ստանդ է նախկին ողի, եռանդը և միաբան գործակցութեան եղանակը. ոչ այլ երիտասարդութիւնը ինքը, բառի ընդարձակ նշանակութեամբ, չքացել է, անհետացել է... Եթէ այդ բացառութիւնը նրանով, որ վերջերս մեր երիտասարդութեան մի մասը, կեանքի ալ և ալ հանգամանքներից ստիպված, հեռանում է այստեղից, դիմում դէպի օտարութիւն, այդ միան-

անել և իմ տենչանքը կը լինի, ըստ կարելոյն, չուտով մեր նորագործ կաթոլիկներին կրօնական մի բաւարար կազմակերպութիւն տալ: Դժբաղդաբար, ես համարեալ եմ զրկված եմ անհրաժեշտ միջոցներից, իսկ շատ բան կայ անելու: Պէտք է ամեն տեղ դպրոցներ բանալ, մասուրներ կառուցանել կամ եկեղեցիները նորոգել և բոլոր անհրաժեշտ անօթները ու կարասիքները: Ինչ հարկաւոր կը լինեն նոյնպէս մի քանի օգնական միսիօնէր քահանայներ: «Բայց ամենից անհրաժեշտն է, մեր նուաճումները պահպանելու համար, օգնութիւն հասցնել հազար մեծամասնութիւնը այդ գրութեան մէջ է գտնվում:

«Մթերքները սպառելու հետ միասին» մենք տեսնում ենք, որ ամեն օր անում է կարօտեալների թիւը: Նս ինձ հարցնում եմ, թէ ինչպէս կարող են այդ մարդկանցից շատերը, արդէն ուսուցանող, դարձան հասուն, երբ նրանք գոնէ կը կարողանային պահպանել իրանց գոյութիւնը մի քանի վայրերի բոյսերով: Սակայն սովն արդէն իր գոնէն է տանում ամենաաղքատների մէջ: Միմիայն առաջիկայ հունձը, այսինքն օգոստոս ամսին, կարող է մի փոքր ամբողջ այդ թշուառներին. մինչև այդ ժամանակ պէտք է օգնութիւն հասցնել նրանց: Բայց մինչև անգամ հունձը անբարար կը լինի թշուառութեան

դաժանի սխալ կը լինէր, որովհետեւ մեծամասնութիւնը, աւելի ապահով վիճակի մէջ գտնվողները՝ մնացել են: Վերջապէս եթէ ենթադրենք, որ դրողները, գործի դուրս անցնողները՝ հեռացած մի քանի անհատների թիւն էին պատկանում, միթէ այն ժամանակ այստեղ մնացած «РАБОТНИКЪ СЫНОТЪ»-ները պիտի առանց կարմրելու խոստովանվեն, որ իրանց դեռ 20-րդ դարի շէնքում ինքանից են հարկաւոր...

Բաւական է, սխալվեցէք պարոններ, նայեցէք թէ ինչ է կատարվում ձեր շուրջը... Ժողովուրդը ձեզանից է լոյս սպասում...

Վ. Մանուկեան

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒԻՑ

Ապրիլի 24-ին

«Մշակի» մէջ մի բանի յօդուածներ երևացին «Բարասուն» ընկերութեան վերաբերեալ Նրան և՛ պաշտպանում էին և դատապարտում:

Դեռ վաղածած է ի հարկէ, դատել այդ և այդ տեսակ ընկերութիւնների գործունէութեան մասին. տարեկան հաշուեկշիռը կորշի շատ բան. սակայն պէտք է շտապեցնել հաշիւը, որովհետեւ պտտում են լուրեր, որոնք պախարակում են այդ տեսակ ընկերութիւնների գործունէութեան ընթացքը:

Ընկերութեան բաժնետէքերից մէկը, որ ներկայ է եղել «Բարասուն» ընդհանուր ժողովներին մէկում՝ հետեւող դէպքն է պատմում, որը որքան ծիծաղելի, նոյնքան և անհաւատալի է:

«Պարոններ,—ասում է գլխաւոր հաշուապահը (որը ծառայելով մի ֆիրմայի մօտ, երեւոյթները պարապում է այդ ընկերութեան գրասենեակում որպէս կոնտրօլօր), հաշիւները երեւում է, որ աւելւած է ի միջի այլոց 26,800 ռուբլու երկաթիղէն ապրանք, հաշուեցուցակներ կան և փողերը վճարված են. այդ ապրանքները ուղարկված են ընկերութեան նախահանձնները, բայց... բայց այդ վերջիններում չեն ըստացվել. հետևապէս քաղաքի և Բալախանի մէջ անհետացել են: Պարոններ, անցեալն էանց,—աւելացնում է նա,—այլ ևս ոչինչ չէ կարելի անել. ջնջե՛ք այդ գումարը և այսուհետեւ անպէս անենք, որ աւելի խիտ հսկողութիւն լինի հաշիւները վրայ:

Ժողովականները համաձայնվել են: Ականջները խօսէ, հայ երեսփոխներ... Պատմում էին նոյնպէս, որ ակցիոներներից մի քանի հոգի, ի նկատի ունենալով իրանց վնասը ակցիոներին ընդհանրով փառաւ որ կերպով կրօնեցուց յետոյ նշուտել են կառը, առել են հետները բենդին, լուցկի և այլն և ջշել են ընկերութեան նախահանձնը: Կառավարչի հարցին, թէ ինչու են եկել և ինչ են ուզում կառքում եկողները պատասխանել են.

«Ախպեր, մեր հորերը չի. լաւ, չենք ուզում դրա խէրը, վառենք պիտի»:

Բաւական երկար համոզելուց յետոյ՝ մարդկանց քաղաք են դարձրել:

Մօտիկ տեղեկութիւն չունենալով ընկերութեան գործերի հետ՝ մենք, ի հարկէ, ապագայի մասին ոչինչ չենք կարող ասել. բայց որ այս բօլէիս այդ ընկերութեան ակցիոները ընկնում են, և ընկնում են անդհաճա՛տ՝ այդ արդէն իրողութիւն է և շատ հակառակ:

դէմ, եթէ որ հենց դարունքից ցանքսեր չանվին հարկաւոր չափով: Ուրեմն հարկաւոր է օգնութիւն հասցնել այդ նպատակով, որովհետեւ դիւղացիները մեծ մասը չունեն ոչ հացահատիկ ոչ էլ դրամ ցորեն աւելնելու համար: Ես մտածում եմ օգնել նրանց սերմեր բաժանելով: Մի լաւ հունձ բաւական կը լինի այս տարի գոհացնելու աղքատներին ամենամահաբանելու կարիքները, որը բաւականանում է քչով:

«Մեր կաթոլիկ ազգաբնակչութեան սերմերը բաժանելու համար, ինձ հարկաւոր է 2,000-ից մինչև 3,000 չափ ցորեն, որը կը պահանջի 24,000-ից մինչև 34,000 ֆրանկ: Ես յոյս ունեմ, որ նախախնամութիւնը ինձ կօչնէ, չը նախելով այն խոչըր գումարներին, որ ես պահանջում եմ, որովհետեւ ես աշխատում եմ այս ձևով պահպանել կաթոլիկ եկեղեցու համար այն նոր մասնակներին, որոնց նա ձեռք բերեց այս պէս համարում: Եւ այդ նոր մասնակները, յոյս ունեմ, որ հենց իրանք մի աւելի առատ հունձի սերմեր կը լինեն: Զեր համակրութիւնները դէպի մեր գործը ինձ յոյս են տալիս, սրբազան, որ այդ գործը պահպանելու համար, այս կրկն օրհնական հանգամանքների մէջ, չեն պակասի ձեր նպատակները մեզ: Ընդունեցէք և այլն:

Վանի հայ-կաթոլիկ պատրիարքական փոխանորդ՝

Հ. Անտոն Զնդոյեան

Типографія Грузинск. Издат. Т.-ва Орбелиановская ул., № 27.